



**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

« 21 » հոկտեմբեր 2022թ.

Հ Ր Ա Մ Ա Ն N 212-ՂԿ

**ԼԻԱՆՆԱ ԱՐՏԱՇԵՍԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 16-րդ մասով և 16-րդ հոդվածի 4-րդ մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասով և 20-րդ հոդվածով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1554-Ն որոշման հավելվածի 147-րդ և 151-րդ կետերը, Լիաննա Գևորգյանի 21.10.2022թ. դիմումը և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի իրավաբանական վարչության պետի տեղակալի (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-24.1-Ղ5-1) թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 18.10.2022թ. անցկացված մրցույթի հարցազրույցի մասնակցի վերաբերյալ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ .

1. Լիաննա Արտաշեսի Գևորգյանին 2022 թվականի հոկտեմբերի 21-ից նշանակել Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) իրավաբանական վարչության պետի տեղակալ (պաշտոնի ծածկագիր՝ 22-4-24.1-Ղ5-1):
2. Լիաննա Արտաշեսի Գևորգյանի պաշտոնային դրույքաչափը սահմանել 291 016 դրամ (երկու հարյուր իննսունմեկ հազար տասնվեց) դրամ՝ համաձայն «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի և հիմք ընդունելով Լիաննա Գևորգյանին տրամադրված Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության գլխավոր քարտուղարի 18.10.2022թ. թիվ 09/17199-2022 տեղեկանքը:

 Recoverable Signature

X 

ՄԻՔԱՅԵԼ ԶԱԼԻՆՅԱՆ

Signed by: ZALINYAN MIKAYEL 1310880573

ՄԻՔԱՅԵԼ ԶԱԼԻՆՅԱՆ